Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ

Անգլերեն-հայերեն,
բացատրական,
եզրութաբանական բառարան

- ԵՐԵՎԱՆ 2024 -

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ

(ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ,

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ, ԵԶՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ)

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Մայիսի 21, 2024 թվական
Երևան, Հայաստան

Սույն բառարանը հրապարակվել է
«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն»
հիմնադրամի կողմից:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն,
«Արբիտրաժային բառարան. անգլերեն-հայերեն, բացատրական, եզրութաբանական», 1-ին խմբագրությամբ - Երևան, 2024 - 23 էջ:

Բառարանի հեղինակներն են՝
Լիլիթ Պետրոսյան *(գլխավոր խմբագիր)*
Նորայր Բաղդասարյան *(խմբագիր, էջադրող)*
Դավիթ Խաչատրյան *(խմբագիր)*
Մարիամ Մելիքյան *(խմբագիր)*

«Արբիտրաժային բառարան»-ն իր տեսակով առաջին նմանօրինակ ձեռնարկն է հայրենական գրականությունում, որը ծառայում է ինչպես արբիտրաժի ոլորտին առնչվող անգլերեն-հայերեն, այնպես էլ բացատրական և եզրութաբանական բառարան:

Բառարանում տեղ գտած բառերը վերաբերում են առևտրային և ներդրումային արբիտրաժի հիմնական հասկացություններին, որոնց իմացությունը անառարկելիորեն անհրաժեշտ նախապայման է ՎԱԼ բնագավառում գործունեություն իրականացնելիս:

Սույն արբիտրաժային բառարանը նախատեսված է արբիտրաժի ոլորտով հետաքրքրված ուսանողների, դասախոսների, ասպիրանտների, արբիտրների, արբիտրաժի ոլորտի այլ պրակտիկ մասնագետների, ինչպես նաև այն քաղաքացիների համար, ովքեր նախատեսում են իրենց վեճը լուծել արբիտրաժի միջոցով:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն (AMCA), 2024

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆ	ՀԱՅԵՐԵՆ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
ADR – Alternative dispute resolution	ՎԱԼ՝ վեճերի այլընտրանքային լուծում	Դատարանից դուրս վեճերի լուծման եղանակներ՝ բանակցություններ, հաշտարարություն, արբիտրաժ և այլն:
***Ad hoc* arbitration**	Ադ հոք (ժամանակավոր) արբիտրաժ	Արբիտրաժի տեսակ, որի ժամանակ կողմերը համաձայնում են իրենց միջև առաջացած վեճը լուծել առանց մշտապես գործող արբիտրաժային հաստատության մասնակցության (այդ թվում՝ կանոնների և ընթացակարգերի կիրառման), որի համար ձևավորում են *ad hoc* տրիբունալ՝ այն հարմարեցնելով իրենց հատուկ պահանջներին:
Administrative fee	Գործավարության վճար	Արբիտրաժային կենտրոնին վճարվող արբիտրաժային ծախսի տեսակ, որը նախատեսված է արբիտրաժային վարույթի շրջանակներում քարտուղարություն իրականացնելու համար:
Admissibility	Թույլատրելիություն	Հայցերի, միջնորդությունների, ապացույցների և փաստարկների ընդունելիության չափանիշները:
Amiable compositeur	Հաշտարար միջնորդ	Արբիտր, որն իրավասու է գործել՝ առանց օրենքի հստակ նորմեր կիրառելու պարտավորվածության՝ հղում կատարելով արդարության ընդհանուր սկզբունքներին:
Amicable settlement	Բարեկամական կարգավորում	Կողմերի կողմից վեճի խաղաղ, բարեկամական կարգավորում:
Annulment of an award *կամ* **Set aside**	Վճռի չեղյալ ճանաչում	Արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումն իրավական գործընթաց է, որի արդյունքում դատարանը

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		չեղյալ է ճանաչում արբիտրաժային վճիռը: Այն կարող է տեղի ունենալ բացառապես լուրջ ընթացակարգային խախտումների, խարդախության, տրիբունալի կողմնակալության կամ վճռի՝ հանրային կարգին հակասելու պայմաններում:
Anti-arbitration injunction	Արբիտրաժը դադարեցնելու որոշում	Դատարանի որոշում, որն արգելում է կողմերին նախաձեռնելու կամ շարունակելու արբիտրաժային վարույթը:
Anti-suit injunction	Դատավարությունը դադարեցնելու որոշում	Դատարանի կողմից կայացվող որոշում, որով դադարեցվում է դատական վարույթը՝ արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում:
Applicable Law	Կիրառելի իրավունք	Այն իրավունքը, որը կիրառվում է վեճը լուծելու համար:
Appointing authority	Նշանակող մարմին	Մարմին, որը կիրառելի կանոնների համաձայն իրավասու է նշանակել արբիտր՝ կողմերի միջև այդօրինակ հարցի շուրջ համաձայնության բացակայության պայմաններում:
Arbitrability	Արբիտրունակություն	Կոնկրետ վեճը արբիտրաժային եղանակով լուծելու հնարավորություն, որը սահմանված է օրենսդրությամբ:
Arbitral Tribunal	Արբիտրաժային տրիբունալ	Ձևավորվում է կողմերի վեճը լուծելու համար: Այն կարող է բաղկացած լինել մեկ կամ մեկից ավելի կենտ թվով արբիտրներից:
Arbitration agreement	Արբիտրաժային համաձայնություն	Պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնություն՝ առկա կամ հնարավոր վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Arbitration award	Արբիտրաժային վճիռ	Արբիտրաժային տրիբունալի կողմից ընդունված պաշտոնական որոշում, որն ըստ էության լուծում է արբիտրաժային վարույթի կողմերի միջև առկա վեճը:
Arbitration clause	Արբիտրաժային վերապահում	Կողմերի միջև կնքվող պայմանագրում ներառվող դրույթներ, որոնցով վերջիններս համաձայնում են տվյալ պայմանագրից բխող վեճը լուծել արբիտրաժային կարգով:
Arbitration friendly jurisdiction	Արբիտրաժամետ իրավասություն	Իրավասություն, որը խրախուսում է արբիտրաժի միջոցով վեճերի լուծումը, աչքի է ընկնում արբիտրաժի ինստիտուցիոնալ զարգացմանն աջակցող օրենսդրությամբ, կյանքի կոչվող արբիտրաժային վճիռներով և արբիտրաժային վճիռները հարգող դատարաններով:
Arbitration Institute of the Stockholm Chamber of Commerce (SCC)	Ստոկհոլմի առևտրային պալատի (ՍԱՊ) արբիտրաժային հաստատություն	Նշանավոր ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոն, որը գործում է Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում:
Arbitration rules	Արբիտրաժային կանոններ	Ընթացակարգային կանոններ, որոնք կիրառվում են արբիտրաժային վարույթն իրականացնելու համար:
Arbitrator	Արբիտր	Չեզոք, անկախ, անկողմնակալ և ձեռնհաս անձ, որը քննում է արբիտրաժային վարույթի կողմերի միջև առաջացած վեճը:
Bifurcation	Բիֆուրկացիա	Ընթացակարգային մեխանիզմ, որով արբիտրաժային տրիբունալը վարույթին առնչվող հարցերը բաժանում է երկու առանձին մասերի և դրանց անդրադառնում առանձին փուլերով: Հաճախ կիրառվում է տրիբունալի իրավասության հետ

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		կապված հարցերը գործի էության վերաբերյալ քննարկումներից տարազատման նպատակով:
Bilateral Investment Treaty	Երկկողմ ներդրումային պայմանագիր	Երկու պետությունների միջև կնքվող պայմանագիր, որը նախատեսում է օտարերկրյա ներդրումների համար խրախուսում և պաշտպանություն, ի թիվս այլնի՝ արդար և հավասար վերաբերմունք, օտարման դեպքում անհապաղ և համարժեք օգնության իրավունք և ներդրողների հետ վեճերը պարտադիր արբիտրաժի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնություն:
Brief	Գործի նյութերի համառոտագիր	Վեճի հետ կապված փաստարկների և իրավական հիմնավորումների գրավոր ամփոփագիր: Լսումներից հետո հաճախ օգտագործվում է եզրափակիչ խոսքի փոխարեն:
Case management conference	Գործի կառավարման խորհրդակցություն	Արբիտրաժային վարույթի կողմերի հետ խորհրդակցություն, որը նպատակ է հետապնդում քննարկել գործի ընթացակարգային մանրամասները, այդ թվում՝ վարույթի անցկացման տարբեր փուլերի ժամանակացույցը:
Claim	Պահանջ	Պահանջ, որը ներառում է որևէ կողմի ցանկացած պահանջ/հայցապահանջ այլ կողմի դեմ:
Code of Conduct	Վարքագծի կանոններ	Ուղեցուցային կանոններ, որոնք կանխորոշում են արբիտրաժային վարույթի առնչությամբ կոնկրետ սուբյեկտների վարքագիծը:
Conservative or Interim Measures	Հայցի ապահովման միջոցներ	Պատճառաբանված կարգադրության կամ վճռի ձևով կայացվող որոշում, որը նպատակադրված է

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		երաշխավորելու արբիտրաժային վճռի կատարումը, այդ թվում՝ կանխելու անդառնալի վնասը մինչև վերջնական վճռի կայացումը:
Consolidation of Arbitrations	արբիտրաժային գործերի միացում	Երկու և ավելի արբիտրաժային գործերի միավորումը մեկ արբիտրաժային վարույթում:
Cooling off periods	Սառեցման ժամանակահատված	Ժամանակահատված, որը արբիտրաժ իրականացնելու պահանջ ներկայացնող կողմին պարտադրում է սպասել որոշ ժամանակահատված նախքան պահանջի ներկայացումը և այդ ժամանակն օգտագործել հաշտեցման եզրեր փնտրելու համար: Տարածված է հատկապես ներդրումային արբիտրաժում:
Costs of arbitration	Արբիտրաժային ծախսեր	Արբիտրաժային վարույթի առնչությամբ կողմերի կողմից կատարվող վճարումներ, որոնք, որպես կանոն ներառում են արբիտրի վճարները, արբիտրաժային հաստատությանը վճարվող գործավարության վճարները, կողմերի ներկայացուցչության վճարները, փորձագետ-վկաների վճարները և վարույթի հետ անմիջականորեն կապված այլ ծախսեր:
Counterclaim	Հակընդդեմ հայց	Պատասխանողի կողմից ներկայացվող հայց:
Court of Arbitration for Sports (CAS)	Սպորտային արբիտրաժային դատարան (ՍԱԴ)	Շվեյցարիայի Լոզան քաղաքում գործող միջազգային արբիտրաժային հաստատություն, որը մասնագիտացած է արբիտրաժի և հաշտարարության միջոցով սպորտային (օլիմպիական/պարաօլիմպիական) վեճերի լուծման ընագավառում:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Cross-examination	Խաչաձև հարցաքննություն	Խաչաձև հարցաքննությունը գործընթաց է, որը ենթադրում է կողմերից մեկի կամ նրա ներկայացուցչի կողմից հակառակ կողմին, նրա ներկայացրած վկային, փորձագետին կամ մասնագետին հարցաքննում:
Decide ***ex aequo et bono***	Վեճը լուծել արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա	Լատիներեն իրավական եզրույթ, որը նշանակում է «համաձայն հավասարության և խղճի կամ համաձայն բարու և արդարության»: *Ex aequo et bono* սկզբունքի հիման վրա վեճը լուծելիս տրիբունալն առաջնորդվում է ոչ թե իրավունքի աղբյուրներում ամրագրված նորմերով, այլ՝ արդարության համընդհանուր սկզբունքներով:
Default award	Կանխադրված վճիռ	Արբիտրաժային տրիբունալի վճռի տեսակ, որը չնայած արբիտրաժի իրականացման վայրի և ժամի մասին կողմերի պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին, կայացվել է կողմերից մեկի՝ վարույթին չմասնակցելու պայմաններում:
Delocalized arbitration	Ապատեղայնացված արբիտրաժ	Արբիտրաժի տեսակ, որն ազատված է *lex loci arbitri*-ի՝ արբիտրաժի վայրի ընթացակարգային իրավունքի սահմանափակումներից:
Doctrine of clean hands	Մաքուր ձեռքերի դոկտրին	Իրավական դոկտրին, որի համաձայն *«արդարություն փնտրող կողմը պետք է արդարացի և ազնիվ դրսևորած լինի իրեն միևնույն հանգամանքներում»*: Գործնականում այս սկզբունքից բխում է, որ տրիբունալը իրավասու է մերժել հայցվորի այն պահանջները, որոնք հիմնված են անօրինական արարքի վրա կամ

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		պահանջի իրավունքի ծագումը, ըստ էության, հետևանք է այդպիսի արարքի: Հաճախ կիրառվում է նաև «Կեղտոտ Ոչ մաքուր ձեռքերի դոկտրին» անվանումով:
Doctrine of good faith (*bona fides*)	Բարեխղճության կամ բարի կամքի (*bone fides*) դոկտրին	Իրավական դոկտրին, որը պարտավորեցնում է առևտրային իրավահարաբերության մասնակիցներին ազնվորեն գործել և չմոլորեցնել կամ թաքցնել միմյանցից կարևոր տեղեկատվությունը:
Doctrine of mutual mistake	Փոխադարձ սխալի դոկտրին	Իրավիճակ, երբ առկա է պայմանագրային հարաբերությունների կողմերի կողմից սխալմունք / տարընթերցում միևնույն նյութական փաստի վերաբերյալ:
Doctrine of separability	Բաժանելիության դոկտրին	Իրավական դոկտրին, ըստ որի կողմերի արբիտրաժային վերապահումը առանձին և տարբեր է այն պայմանագրից կամ համաձայնագրից, որտեղ վերապահումը տեղակայված է: Այսպիսով, նույնիսկ հիմնական պայմանագրի անվավերության կամ առոչնչության դեպքում արբիտրաժային վերապահումը շարունակում է գործել:
Due process	Պատշաճ ընթացակարգ	Գործընթաց, որն ապահովում է, որ ներգրավված բոլոր կողմերը հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց դիրքորոշումը, տրամադրելու ապացույցներ և լսված լինելու անաչառ արբիտրաժային տրիբունալի կողմից:
Emergency arbitration	Արտակարգ միջոցների արբիտրաժ	Արբիտրաժային գործընթաց, որը հնարավորություն է տալիս կողմերին նախքան արբիտրաժային տրիբունալի կազմավո-

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		րումը պահանջել հրատապ ապահովման կամ պահպանման միջոցներ:
Emergency Arbitrator	Արտակարգ միջոցների արբիտր	Արբիտր, որը նշանակվում է նախքան տրիբունալի ձևավորումը՝ արտակարգ միջոցների կիրառման հարցը լուծելու նպատակով:
Escalation clause	Էսկալացիոն դրույթ	Պայմանագրային ժամկետ, ըստ որի՝ կողմերը պետք է նախքան արբիտրաժ իրականացնելու պահանջ ներկայացնելը փորձեն վեճը լուծել խաղաղ ճանապարհով:
Estoppel	Էստոպել / արգելադրում	Իրավական սկզբունք, որը թույլ չի տալիս կողմին ներկայացնել այնպիսի պահանջ կամ առարկություն, որը հակասում է նույն հարցով իր նախկինում հնչեցրած դիրքորոշմանը կամ դրսևորած վարքագծին: Այն, ըստ էության, արգելում է կողմերին արբիտրաժային վարույթում հանդես գալ այնպիսի դիրքորոշմամբ, որն անհամապատասխան է նախկի-նում դրսևորած վարքագծին (*allegans contraria non est audiendus*)՝ հատկապես այն պարագայում, երբ վեճի մյուս կողմը վարույթի շրջանակներում հիմնվել է այդ դիրքորոշումների կամ գործողությունների վրա:
Evidentiary hearings	Ապացուցողական լսումներ	Լսումներ, որի շրջանակներում կողմերի միջնորդությամբ ներգրավված վկաներն իրենց բանավոր ցուցմունքները ներկայացնում են տրիբունալին:
***Ex parte* communication**	Ընդդիմազերծ *(ex parte)* շփումներ	Մի կողմի շփումը տրիբունալի հետ առանց մյուս կողմի ներկայության կամ իմացության:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Fair and equitable treatment	Արդար և հավասար վերաբերմունք	Միջազգային ներդրողների պաշտպանության ստանդարտ, որը նախատեսված է երկկողմ ներդրումային պայմանագրերում, և գլխավորապես կիրառվում է միջազգային ներդրումային արբիտրաժներում:
Fédération des Ingénieurs Conseils / International Federation of Consulting Engineers (FIDIC)	Ինժեներ խորհրդատուների միջազգային ֆեդերացիա (ՖԻԴԻԿ)	Կառուցապատման տեխնոլոգիաների և ճարտարագիտության ոլորտներում խորհրդատվական միջազգային կազմակերպություն:
Forum	*Forum*	Լատիներեն եզրույթ, որն օգտագործվում է «դատարան» կամ «տրիբունալ» իմաստներով:
International Chamber of Commerce (ICC)	Միջազգային առևտրային պալատ (ՄԱՊ)	Աշխարհի ամենամեծ և ամենից ներկայացուցչական գործարարական կազմակերպությունը, որն ունի գործունեության երեք հիմնական ուղղություններ՝ կանոնների սահմանում, վեճերի այլընտրանքային եղանակով լուծում և մշակված քաղաքականության շահերի պաշտպանություն:
ICC International Court of Arbitration	ՄԱՊ Միջազգային արբիտրաժային դատարան	Միջազգային ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատություն, որը գտնվում է Փարիզ քաղաքում և գործում է Միջազգային առևտրային պալատի կառուցվածքային շրջանակներում:
Implied consent	Ենթադրվող համաձայնություն	Երբ որևէ կողմի համաձայնությունը արբիտրաժային համաձայնության որևէ հարցի շուրջ հստակ չէ, սակայն այլ հանգամանքներով և փաստերով պայմանավորված այն կարող է ենթադրվել:
INCOTERMS	ԻՆԿՈԹԵՐՄԶ	Միջազգային առևտրի պայմաններ՝ ՄԱՊ-ի կողմից պատրաստված միջազգային

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		առուվաճառքի պայմանագրերում կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող կանոններ:
Institutional arbitration center	Ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոն	Մշտապես գործող արբիտրաժային հաստատություն, որի առաքելությունն է արբիտրաժային գործերի վարումը:
Interim award	Միջանկյալ վճիռ	Արբիտրաժային տրիբունալի կողմից արբիտրաժային վարույթի ընթացքում կայացվող որոշում, որը վերաբերում է կոնկրետ խնդրի և տրամադրում ժամանակավոր լուծում մինչև վերջնական վճռի կայացումը:
International Center for Settlement of Investment Disputes (ICSID)	Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոն (ԻՔՍԻԴ)	1965 թվականին Վաշինգտոնում ստորագրված «Պետությունների և օտարերկրյա անձանց միջև ներդրումային վեճերի լուծման մասին» կոնվենցիայի հիման վրա միջազգային ներդրումների և դրանցից բխող վեճերի բնագավառում մասնագիտացած ներդրող-պետություն արբիտրաժային կենտրոն:
Investor-state arbitration	Ներդրող-պետություն արբիտրաժ	Իրավական մեխանիզմ, որը թույլ է տալիս մասնավոր ներդրողներին փոխհատուցում պահանջել կառավարություններից միջազգային ներդրումային համաձայնագրերի խախտումների պարագայում:
Joinder of additional party	Լրացուցիչ կողմի ներգրավում	Արբիտրաժային վարույթի կողմի միջնորդության հիման վրա վարույթին նոր կողմի ներգրավման գործընթացը:
Jura novit arbiter	«Արբիտրը գիտի օրենքը»	Լատիներեն իրավական եզրույթ, որը թարգմանաբար նշանակում է «արբիտրը գիտի օրենքը»: Այն կոնցեպտուալ առումով հիմնված է հռոմեական իրավունքից փոխառված *«jura novit curia»*

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		իրավական դոկտրինի վրա: Այն մի կողմից սահմանում է, որ արբիտրները իրավասու են և պարտավոր կիրառելու վեճի նկատմամբ կիրառելի իրավական նորմերը, նույնիսկ եթե դրանք չեն բարձրաձայնվել կամ վիճարկվել ներգրավված կողմերի կողմից, իսկ մյուս կողմից՝ կողմերին ազատում օրենք վկայակոչելու և տրիբունալի առաջ մեկնաբանելու պարտակա-նությունից:
Jurisdiction of Arbitral Tribunal	Արբիտրաժային տրիբունալի իրավասություն	Արբիտրաժային տրիբունալին վերապահված հարցերի շրջանակի վերաբերյալ որոշումներ կայաց-նելու իրավազորություն:
Kompetenz-kompetenz ***compétence de la competence***	«Կոմպետենց-կոմպետենց»	Իրավական դոկտրին, որն արտացոլում է արբիտրաժային տրիբունալի իրավունքը՝ որոշում կայացնելու սեփական իրավա-սության վերաբերյալ:
Lex arbitri	*Lex arbitri*	Լատիներեն եզրույթ, որը մեկնա-բանվում է որպես արբիտրաժի նկատմամբ կիրառելի իրավունք:
Lex fori	*Lex fori*	Լատիներեն եզրույթ, որը մեկնա-բանվում է որպես արբիտրաժի վայրի դատարանի կողմից կիրառվող իրավունք:
Lex loci arbitri	Արբիտրաժի վայրի օրենք	Լատիներեն եզրույթ, որը մեկնաբանվում է որպես արբիտրաժի վայրի իրավունք:
Lex mercatoria	*Lex mercatoria*	Լատիներեն եզրույթ, որը մեկնաբանվում է որպես իրավական սկզբունքների և ձեռնարկատիրական առևտրային սովորույթների համախումբ, որը կիրառվում է միջազգային առևտրային գործարքների

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		առնչությամբ վեճերի կարգավորման համատեքստում:
Lex sportiva	*Lex sportiva*	Լատիներեն եզրույթ, որը մեկնաբանվում է որպես իրավական սկզբունքների, նախադեպերի և սովորույթների համախումբ, որը կիրառվում է որպես սպորտի բնագավառում ծագող վեճերի նկատմամբ կիրառելի իրավունք: Ընդունված է համարել, որ վերջինիս բովանդակային հիմքը ձևավորում են սպորտի կառավարման մարմինների (SGB) կարգավորումները և Սպորտային արբիտրաժային դատարանի մեկնաբանությունները այդ կարգավորումների վերաբերյալ:
Lis pendens	*Lis pendens*	Իրավական դոկտրին, որը ենթադրում է, որ դատական կամ արբիտրաժային վարույթում գտնվող գործը չի կարող զուգահեռաբար քննվել այլ դատարանի կամ աբիտրաժային տրիբունալի կողմից:
London Court of International Arbitration (LCIA)	Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան (ԼՄԱԴ)	Նշանավոր արբիտրաժային կենտրոն, որը գործում է Միացյալ Թագավորության մայրաքաղաք Լոնդոնում: Հանդիսանում է ամենահին արբիտրաժային հաստատությունը, որը զբաղվում է միջազգային առևտրային վեճերի լուծմամբ:
Mediation-Arbitration (Med-Arb)	Հաշտարարություն-արբիտրաժ (Մեդ-արբ)	ՎԱԼ տարածված տեսակ: Այն սկսվում է հաշտարարության գործընթացով, սակայն կողմերի միջև հաշտության համաձայնության չհասնելու պայմաններում, գործով իրականացվում է արբիտրաժ և կայացվում կողմերի

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		համար պարտադիր և վերջնական վճիռ:
Merits of the case	Գործի էություն	Արբիտրաժային վարույթի կողմերի ներկայացրած իրավական և փաստական հիմքերի, փաստերի, պատճառաբանությունների, ապացույցների և պահանջների ամբողջությունը, որը ենթակա է գնահատման տրիբունալի կողմից և դրվում է արբիտրաժային վճռի հիմքում:
Multi-Tiered Dispute Resolution Clause (MDR Clause)	Վեճի լուծման բազմահանգրվան վերապահում (ՎԼԲ վերապահում)	Վեճերի լուծման բազմահանգրվան վերապահումը նախատեսում է վեճերի լուծման մեխանիզմ, որը ներառում է մեկից ավելի մեթոդներ:
New York Convention on the Recognition and Enforcement of Foreign Arbitral Awards	Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիա	Միջազգային պայմանագիր, որն ապահովում է օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման գործընթացը Կոնվենցիայի անդամ 172 երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում:
Online arbitration	Առցանց արբիտրաժ	Արբիտրաժի տեսակ, որն իրականացվում է բացառապես էլեկտրոնային հաղորդակցության միջոցների գործարկմամբ՝ պահանջի առցանց մուտքագրումից մինչև վճռի հեռավար հրապարակում:
Pathological clause	Արատավոր վերապահում	Արբիտրաժային վերապահում, որն անորոշ կամ երկիմաստ լինելու պատճառով դժվար կամ անհնարին է դարձնում դրա գործարկումը:
Preliminary order	Նախնական կարգադրություն	Արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված միջանկյալ որոշման տեսակ: Այն, որպես կանոն, անդրադառնում է վարույթի ընթացակարգային հարցերին:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Prima facie	Առերևույթ (*Prima facie*)	Լատիներեն եզրույթ, որը նշանակում է «առաջին հայացքից»: Կիրառվում է ապացույցների կամ փաստերի նախնական գնահատման համատեքստում:
Procedural Timetable	Ընթացակարգային ժամանակացույց	Արբիտրաժային տրիբունալի կողմից սահմանված ժամանակացույց, որը կազմվում է վարույթի ընթացակարգային քայլերն ու ժամկետները սահմանելու նպատակով:
Public policy	Հանրային կարգ	Արդարադատության և բարոյականության հետ կապված հիմնարար սկզբունքներ, որոնք պետությունը ցանկանում է պաշտպանել, անգամ եթե խնդիրն ուղղակիորեն իրեն չի վերաբերում, կանոններ, որոնք նպատակ ունեն ծառայել պետության էական քաղաքական, սոցիալական կամ տնտեսական շահերին, որոնք հայտնի են «հանրային կարգի կանոններ» (*lois de police*) անվամբ, և պետության պարտականությունը հարգելու այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնած իր պարտավորությունները:
Replacement of Arbitrators	Արբիտրների փոխարինում	Արիտրաժային տրիբունալի կազմում ներգրավված արբիտրների փոխարինումը այլ արբիտրներով կամ արբիտրով:
Request for Arbitration	Արբիտրաժ իրականացնելու պահանջ	Փաստաթուղթ, որը ներկայացվում է արբիտրաժային վարույթ նախաձեռնելու նպատակով արբիտրաժային հաստատություն, և պարունակում է տեղեկություններ վեճի բնույթի, վեճի կողմերի, պահանջի և կանոններով սահմանված այլ

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		մանրամասնությունների վերաբերյալ:
Res judicata	*Res judicata*	Իրավական դոկտրին, որը ենթադրում է, որ «դատարանը կրկին չի որոշում արդեն որոշված գործը»՝ արտացոլելով դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքը:
Response to Request for Arbitration	Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխան	Փաստաթուղթ, որը ներկայացվում է պատասխանողի կողմից արբիտրաժային վարույթի շրջանակներում, անդրադառնում է հայցվորի կողմից արբիտրաժ իրականացնելու պահանջում ուրվագծված պահանջներին և ներկայացնում պատասխանողի դիրքորոշումը, ինչպես նաև հակընդդեմ հայցերը, եթե այդպիսիք առկա են:
Scrutiny of award	Վճռի ուսումնասիրություն	Որոշ արբիտրաժային հաստատությունների կողմից առաջարկվող ծառայություն, որը ներառում է վճիռի ձևական պահանջների ուսումնասիրություն և տեխնիկական խնդիրների վերհանում / վերանայում:
Seat of arbitration	Արբիտրաժի վայր	Բնակավայր կամ երկիր, որի իրավասության ներքո իրականացվում է արբիտրաժային վարույթը:
Set off claim	Հաշվանցման պահանջ	Պատասխանողի կողմից ներկայացված հակընդդեմ հայցի տեսակ, որն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը:
Singapore International Arbitration Centre (SIAC)	Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոն (ՍՄԱՊ)	Նշանավոր ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատություն, որը գործում է Սինգապուրում:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Sole arbitrator	Միանձնյա արբիտր	Արբիտր, որը լիազորված է վեճը լուծելու միանձնյա:
Statement of Claim	Հայց	Փաստաթուղթ, որով հայցվորը արբիտրաժային վարույթի շրջանակներում ներկայացնում է իր հայցի հիմքում ընկած փաստերը, իրավական հիմնավորումները, ապացույցները, ինչպես նաև հայցապահանջը, եթե դրանք չեն ներառվել Արբիտրաժ իրականացնելու պահանջում:
Statement of response	Հայցադիմումի պատասխան	Հայցվորի կողմից ներկայացված հայցին ի պատասխան ներկայաց-վող փաստաթուղթ, որն արտացո-լում է պատասխանողի հիմնական դիրքորոշումները, եթե դրանք չեն ներառվել Արբիտրաժ իրականացնելու պահանջի պա-տասխանում:
Substantive law	Նյութական իրավունք	Վեճի էության նկատմամբ կիրա-ռելի նորմեր:
Terms of Reference/Protocol of Procedure	Քննության ընթացակարգի արձանագրություն	Ընթացակարգային փաստաթուղթ, որը կազմվում է արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո գործի տվյալները, կողմերի դիրքորոշումները, գործով պարզման ենթակա հարցերի շրջանակը սահմանելու և այլ հարցեր շարադրելու համար:
Third Party Funding	Երրորդ կողմի ֆինանսավորում	Երբ արբիտրաժային գործի կողմ չհանդիսացող անձը/կազմակերպությունը ֆինանսավորում է կողմի մասնակ-ցությունը արբիտրաժին:
Trifurcation	Տրիֆուրկացիա	Արբիտրաժային վարույթի բաժանում երեք փուլերի, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է տարբեր խնդիրներին, ինչպիսիք են՝ իրավասությունը, պատասխա-

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

		նատվությունը և արբիտրաժի ծախսերը և այլն:
Truncated tribunal	Կրճատված տրիբունալ / Թերի կազմով տրիբունալ	Արբիտրաժային տրիբունալ, որի ի սկզբանե նշանակված անդամները կա՛մ հեռացվել են, կա՛մ հրաժարվել արբիտրի գործառույթների իրականացումից, կա՛մ մահացել են:
UCP 600	ՅուՍիՓի 600	Միջազգային առևտրային պալատի կողմից պատրաստված ակրեդիտիվների և դրանցից բխող հարաբերությունների կարգավորման կապակցությամբ կիրառվող կանոններ:
UNCITRAL	ՅՈՒՆՍԻՏՐԱԼ	ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով:
UNCITRAL Model Law on International Commercial Arbitration	Միջազգային առևտրային արբիտրաժի մասին ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի նախատիպային օրենք	ՄԱԿ-ի միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի կողմից մշակված նախատիպային օրենք, որը հիմք է հանդիսացել մի շարք երկրների արբիտրաժային օրենսդրությունների, այդ թվում՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի մշակման համար:
UNIDROIT Principles	ՈՒՆԻԴՐՈՒԱ սկզբունքներ	Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներ, որը նպատակ է հետապնդում ներդաշնակեցնել միջազգային առևտրային հարաբերություններում կիրառվող մասնավոր իրավունքի սկզբունքները:
Unilateral option clause	Միակողմանի ընտրությամբ վերապահում	Արբիտրաժային համաձայնության տեսակ, որը կողմերից մեկին թույլատրում է վեճի լուծման համար ընտրել համաձայնությունում նշված արբիտրաժը կամ դիմել դատարան, իսկ մյուս կողմի համար արբիտրաժային համաձայնությունը իր բոլոր պայմաններով պարտադիր է:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024

Venue of hearings	Լսումների անցկացման վայր	Ֆիզիկական վայր, որտեղ անցկացվում են արբիտրաժային լսումները:
Waiver	Առարկելու իրավունքից հրաժարում	Արբիտրաժային վարույթի կողմի՝ իրեն վերապահված իրավունքից կամավոր հրաժարում:
Witness statement	Վկայի հայտարարություն	Վկայի կողմից ներկայացված գրավոր փաստաթուղթ կամ բանավոր հայտարարություն, որը ներկայացվում է տրիբունալի առջև:
Written Communications	Գրավոր հաղորդակցություն	Կողմերի, տրիբունալի և/կամ կենտրոնի (ինստիտուցիոնալ արբիտրաժի պարագայում) միջև ծանուցումների իրականացման, փաստաթղթերի փոխանցման և այլ հաղորդակցության եղանակ, որն իրականացվում է գրավոր:

© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն, 2024